



# ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

# ԱՐԾԿԵ

## ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՔԱՐՏԵԶ-ՈՒՂԵՑՈՒՅՑ









# HISTORICAL ARMENIA

# ARTZKE

## A MAP-GUIDE TO HISTORICAL MONUMENTS








Արծկեցի հայ ընտանիք, 1908 թ. քրդերի ձեռքով սպանված 6 արծկեցիներ
An Armenian family from Artzke; the bodies of 6 Armenians from Artzke killed by Kurds




Սիփան (Նեխ Մասիք) լեռը (4058 մ) և Վանա լիճը, տեսարան Արծկեի բերդից
Mount Sipan (Nekh Masik, 4,058 m) and Lake Van; the lake as seen from the castle of Artzke

Արծկեն գտնվում է Մեծ Հայքի Տավրոբերան (Տուրուբերան) աշխարհի (նահանգի) Բզնունյաց գավառի արևելյան հատվածում, որը զարգացած միջնադարում զատվելով Բզնունիքից՝ ձևավորվել է որպես առանձին գավառ: Տարածված է Վանա լճի հյուսիսային ափին և սկսվելով ափեզրից՝ հասնում է մինչև Սիփան լեռան գագաթով ձգվող ջրբաժան գիծը:

Մ.թ.ա. Թ-Զ դարերում Վանի թագավորության կարևոր և պաշտպանական ամրություններով հզորացված տարածաշրջաններից էր:

Է դարում գավառը նվաճում և ավերում են արաբները: 885-1001 թթ. Արծկեն մաս է կազմում Անիի Բագրատունյաց, իսկ դրանից հետո՝ Վասպուրականի թագավորության (մինչև 1021 թ.): Այնուհետև նվաճում են թուրք-սելջուկները, որոնց էլ հաջորդում են թուրքմենական ցեղերը: ԺԷ դարում գավառն ասպատակում, իսկ բնակչությանը բռնագաղթի են ենթարկում պարսիկները:

Չնայած դարից դար ճաշակած արհավիրքներին՝ 1915 թ. ցեղասպանության նախօրեին Արծկե գավառը դեռևս գլխավորապես բնակեցված էր հայերով, որոնց մեծագույն մասը բնաջնջվում է ապրիլի 6-8-ն ընկած ժամանակահատվածում:

Գավառն առանձնապես հայտնի էր բարձրորակ ցորենով, որն արտահանվում էր նաև հարևան գավառներ: Այժմ նշանավոր է իր ընկույզով:

Արծկեն հարուստ էր հայկական նյութական մշակույթի բազմադարյան և տարաբնույթ հուշարձաններով, սակայն դրանց հիմնական մասն անցած տասնամյակների ընթացքում նույնպես ոչնչացվել է:

Սույն քարտեզ-ուղեցույցը հասցեագրում ենք պատմական հուշարձաններով հետաքրքրվող հայ և օտար հանրությանը:

---

Artzke is situated in the east of Bznunik District, in Tavroberan (Turuberan) Province, Armenia Maior. In the High Middle Ages, it was separated from Bznunik as a distinct district which extends on the northern shore of Lake Van: its territory stretches from the shoreline to the watershed of the summit of Mount Sipan.

In the 9th to 6th centuries B.C., Artzke District was within the borders of Van Kingdom as one of its most important parts highly strengthened with fortifications.

In the 7th century, Artzke was taken and destroyed by the Arabs. Between 885 and 1001, it was within the Bagratid Kingdom of Armenia, after which it became part of the Kingdom of Vaspurakan. After the latter's fall (in 1021), the district was conquered by the Seljuk-Turks whose domination was followed by that of different Turkoman tribes. In the 17th century, Artzke was invaded by the Persians who forced the local population into deportation.

Despite the foreign invasions following one another, Artzke remained predominantly inhabited by Armenians up until the genocide of 1915: the largest part of its population was massacred between 6 and 8 April of the same year.

Artzke was particularly renowned for a sort of high-quality wheat which was exported into the neighbouring districts. Also, it has always been famous for its nuts.

Artzke used to abound in a wide variety of centuries-old Armenian monuments which were mostly destroyed in the past decades, sharing the fate of the Armenian inhabitants of the district.

This map-guide is intended for Armenians and foreigners interested in historical monuments.

ISBN 978-9939-843-38-4

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE
www.raa.am, www.armenianarchitecture.am, raayer@sci.am




Արծկե (Ադիլջևազ) քաղաքն ու բերդը, ձիթհանաքար Խոռանց գյուղում
The city of Artzke (Adilcevaz) and its castle; an oil press stone in Khorants Village




Սքանչելագործ վանքը, Արջրա գյուղի ծովակուլ գերեզմանոցի խաչքարերից մեկը
The monastery of Skanchelagortz; one of the cross-stones of the sunken cemetery of Arjra Village









Զիուկունի (Քեֆկալե) ամրոցի տաճարի խարսխաքարերն ու պատկերաքանդակներից մեկի գրչանկարը
Pillar bases from the temple of Ziukuni (Kefkale) Castle; a tracing of some reliefs adorning one of these bases


ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
գյուղ
մասամբ պահպանված բերդ
սեպագիր արձանագրություն
մասամբ պահպանված վանք
հիմնավեր վանք
վիմափոր վանք
հիմնավեր եկեղեցի
մասամբ պահպանված գերեզմանոց
հիմնավեր գերեզմանոց
մզկիթ
մահմեդական գերեզմանոց
իջեւանատուն
ջրաղաց
ձիթհան
ԲԱՂՆՈՑ
ԱՐՃԵՇ
ՄԱՆԱԶԿԵՐՏ
ԽԼԱԹ
Ծոգտս Zirkit
Սբ. Սարգիս
Էգեձոր Gümüşdüven
Կարաշեյխ Karaşeyh
Սբ. Աստվածածին
Նորշեն Heybeli
Տանձիկ Danzit
Սբ.Հովհաննես
Սբ. Գեւորգ
Պեշնագոմեր Kömürlü
Կորտ Gültepe
4058
Սիփան լ.
Խորերով Kısıklı
Բերդավ Budaklı
Սուբեճ (Գիլ) լիճ
Վերանկագի Çanakyayla
Այդնլար Aydınlar
Սահմանախաչ
Սբ. Ստեփանոս
Վիճկացուկ Eşeksorik
Վեչիկ
Սուրբեն (Սամ)
Սբ. Ամենափրկիչ
Նորշենջուղ Harmantepe
Սբ. Աստվածածին
Չին Գազոխ
Սբ. Գողգոթա
Կարաքեշիշ Yarımada
Տարավանք İşiklar
Արջրա Akçıra
Սբ. Աստվածածին
Արջրա Վ.
Սբ. Աստվածածին
Այղրգյոլ Aygırgölü
Մանիկ Gölüstü
Ակնա (Ճերմակ) լիճ
Ջիուկունի (Քեֆկալե)
Սբ.Հովհաննես
Սբ. Հարություն
Սիփան Վ. Y. Süphan
Սբ. Սարգիս
Սիփան Ն. A. Süphan
Արխուս Ipekçayır
Սքանչելագործ
Ցիպնա (Նավկա)
Առեն Göldüzü
Առեն լիճ
Սբ. Լուսավորիչ
Սբ. Գեւորգ
Սբ. Ամենափրկիչ
Դանի Danacı
Սբ. Սարգիս
Տկիս
ԱՐԾԿԵ (ADİLCEVAZ)
Սբ. Հարություն
Անուշաղբյուր Tırnakdağı
Սբ. Աստվածածին
Խոռնակ Karşıyaka
Սբ. Հարություն
Առինջկուս Kavuştuk
Ջալ փաշա
Կողես Վ.
Սբ. Գեւորգ
Yolçatı
Սբ. Ամենափրկիչ
Ադրուն
Սբ. Սարգիս
Հացկնդուլ Bahçedere
Տկուց Սբ. Անանիա
Սբ. Աստվածածին
Ուլու ջամի
Սբ. Գրիգոր
Աստվածընկալ Սբ. Նշան
Կողես Ն.
Կոճեր Erikbağı
Գուզել Kozel
Թուխ մանուկ
Բարկատ (Բարկաշատ) Esenkıyı
Սբ. Հակոբ
Կողուց Սբ. Գրիգոր
Կոճերաց վանք
Վանա լիճ